



# ՏԵՍԱԿԵՏ

*Posted on January 9, 2022 by Keghart*



Category: [Opinions](#)



**Ռուբեն Յովակիմեան, ՍԵՆ Ռաֆայել, 5 Յունուար 2022****«Քաղաքական գործիչներից ոմանք, որ ամեն նիւթի շուրջ ասելիք են գտնում, սխալմամբ է որ ուղեղ ունեն. ողնուղեղը նրանց բաւարար է»:  
Էյնշտայն**

Կարծում եմ, թէ տեղին է նշել, ընդգծել կամ շեշտել, որ քաղաքական մթնոլորտը մեր սիրեցեալ երկրում ոչ միայն քառասային, այլ նաեւ պայթուցիկ է դառնում օր ըստ օրէ: «Ընդդիմութիւն» կոչեցեալները յամառօրէն չեն ցանկանում հաշտուել այն պարզ ու յստակ մտքի հետ, որ իրենց խօսքը պետք եղածից շատ ավելի արդէն ասել են, եւ ավելի քան երկու տասնամեակ, երկրի բնակչութեան զգալի մասը նրանց համն ու հոտը լայնօրէն առել է եւ սպասելիք այլեւս չունի նրանցից, որի ստոյգ ապացոյցն էր, երբ վերջին ընտրութիւններին հասարակութեան կեսից ավելին (52%) մերժեց մասնակից լինել՝ ձեռնպահ մնալով, իսկ զանազան աճպարարութիւններով երկու դաշինք կարողացան խցկուել խորհրդարան (27+5 արժո՞ւ 105-ի վրայ), ոչ թէ օգտակար լինելու, այլ իշխանութեան գործունեութեան նկատմամբ ամեն տեսակի խոչընդոտ ստեղծելու ստոյգ ծրագրերով: Այդ էր նրանց «հայրենաշինութեան» մեթոդը:

Ենթադրաբար բազում են նախկիններին մերժողները, բացի փողոցում պիցցա ուտողներից եւ արդէն գրպանած գողօնից օգտուողներից, որոնց կարելի է միացնել նաեւ սահմանափակ մտայնութեամբ անձանց, որ լայնօրէն տարածուող քարոզչութեան զոհ են դարձել: Սխալ չէ այն միտքը, թէ ոմանց համար ուղեղ ունենալը ավելորդ է, քանզի՝ ողնուղեղը նրանց լայնօրէն բաւարար է:

Չմոռանանք թոյլ բարոյականութեամբ մամուլի այն տեսակը, որ սնուում է երեւոյթները խեղաթիւրելով եւ սխալ, իմա՝ կեղծ տեղեկութիւնների սփռումով:

Չարաբաստիկ 44-օրեայ դժոխքից յետոյ իւրաքանչիւր հայ իւրովի ապրեց այդ չարիքի թողած հետքերը, մանաւանդ հայ ռազմագերիների նկատմամբ անբարոյ եւ վայրի վերաբերմունքը, բայց անհասկանալի է, թէ ինչո՞ւ ոմանց համար այն դարձել է չարաշահութեան նախընտրելի խնդիր եւ ամեն առիթով, տեղին թէ անտեղի, վայրահաչոցներ անպակաս են նրանց ազատելու մասին տարուած աշխատանքի վերաբերեալ, այն աստիճան, որ երկիրը «փրկող»ներից մեկը իրեն յատուկ լրջութեամբ յայտնում է, որ եթէ ինքը լինէր վարչապետ՝ խնդիրը վաղուց լուծուած կը լինէր: Յաւալին այն է, թէ **փայլուն ուղեղ** ունեցողների այդ շրջապատում չգտնուեց մի անձ, որ հարց տար այդ հրաշագործին, թէ «ո՞ւմ էիր սպասում»: Աւելին, վերջերս հինգ ռազմագերի ազատելու առիթով երկրի թէ սփիւռքի որոշ **առաջատար** թերթեր լուրը ծանուցեցին յատուկ շեշտելով եւ ընդգծելով, թէ Հունգարիոյ իշխանութեան միջամտութեամբ է տեղի ունեցել միջադէպը եւ այն կարծիքն է ստեղծուում, թէ երեւոյթի կարեւոր մասը գերիների ազատումը չէր, այլ մի ուրիշ երկրի միջամտութիւնը: Պիտի զարմանա՞լ, թէ՞ ողբալ նման մտայնութեան գոյութեան առիթով, իսկ այս առաւօտ սփիւռքի հարիւրամեայ փորձառու

թերթը գրում է, թե «Թեհրան կ'աջակցի Հայաստանի ինքնիշխանության»: Այս պարագային երկու կարծիք չի կարող լինել՝ ամեն մարդ ազատ է եւ լիիրաւ իր կարծիքը ունենալ երեւոյթների կամ իրականութեան վերաբերեալ, բայց երբ խմբագիրն է խեղաթիւրուած իր կարծիքը պարտադրում հասարակութեան, ապա այն այլ անուան արժանի չէ, քան՝ անբարոյ կեցուածքի, եւ պարզ չէ, թէ ո՞ւմ հրամանն է կատարում, կամ ա՞յդ է արդեօք երկիր փրկելու լաւագոյն գործունեութիւնը: Աւա՛ղ:

Այս բոլորի կողքին, մենք այն կարծիքի չենք, թէ ներկայ իշխանութիւնները կատարեալ են եւ ենթակայ չեն որեւէ քննադատութեան կամ դժգոհութեան: Քաւ լիցի, բայց ո՞վ է անթերի եղել մեր ունեցածների մէջ: Ճիշտ է, որ արդի մեր վարչապետը յաճախ եւ մի փոքր երկար է խօսում մոռանալով երբեմն, որ լռութիւնը ակելի գնահատելի եւ նախընտրելի է, բայց արդեօք դա իրաւունք է տալիս ոմանց՝ նրան դաւաճան որակել՝ առանց որեւէ հիմունքների:

Իմ համեստ ունակութիւնների պայմաններում չեմ կարող հասկանալ եւ ըմբռնել մի պարզ բան, երբ ակելի քան մէկ տարի ամենուր դաւաճան գոռալով՝ վարչապետի հրաժարականը պահանջողները, որոնց միացան ոչ միայն քաղաքական, այլ նաեւ այդ դաշտի հետ առնչութիւն չունեցող անձնաւորութիւններ՝ առանց բանականութեան պահանջի: Թեւեւ նրանց իրական պարտքն էր խոհեմ դիրք ընդունել, բայց ինչպէս երկու կաթողիկոսները նախագահի հետ մէկտեղ եւ մի շարք գիտութեան ու արուեստի ներկայացուցիչներ, յանձնառու եղան կրակի վրայ իւր լցնելով՝ կացութիւնը ակելի բարդացնել: Այսօր երկրով մէկ կազմուել են խմբեր, ուր բացակայ են յարգանքն ու հաւատը իրար հանդէպ եւ անհանդուրժողականութիւն է տիրում ամենուրեք:

Անհնար է հարց չտալ, թէ աղմկարար բողոքողները ո՞ւմ են արժանի յաւակնորդ համարում երկրի ղեկավարի պաշտօնին, եթէ զանց առնենք այն խայտառակ դրուագը, երբ ցանկացան մէկ տարով վարչապետի աթոռին դնել մի քաղաքական խրտուիլակի՝ տեղ պատրաստելու միտումով յաջորդի համար, որի ե՛ւ ինքնութիւնը ե՛ւ անցեալը քաջ յայտնի են բոլորին:

Ի՛նչ ամօթ եւ մտքի խեղճութիւն ու սնանկ մակարդակ:

Դաս տալու սովոր չեմ եւ մտադիր եւս չեմ, բայց կը ցանկանայի յուշել մեր վարչապետին, որ իր թերութիւններով հանդերձ (անթերի մարդ չկայ) պիտո՞ւ մնայ իր աթոռին կառչած, որ այն չանցնի նախկիններին, միայն թէ ինքը եւս մտածելու եւ չափաւորուելու կարիք ունի եւ իր ստանձնած պաշտօնը պարտաւորեցնում է, որ ինչպէս մեր նախնիք էին ասում, եօթ անգամ չափել եւ նոր մէկ անգամ կտրել: Նորութիւն չէ, որ իւրաքանչիւր ղեկավար իր երկրի հայելային պատկերն է եւ այսօրուայ դրութեամբ մեր վարչապետը մասամբ իր գաւառականութեամբ չի համապատասխանում հինգ հազարամեայ մեր մշակոյթի չափանիշին, առնուազն յարգանքի տուրք մատուցելով մե՛ծն Մաշտոցին՝ ոչ միան փոխի, այլ դադարի շուկայական բարբառով խօսել, այլ նաեւ պարտադրի նոյնը

իր բոլոր գործակիցներին, որովհետև իր օրինակը վարակիչ է, իսկ եղած սահմանադրութեան տառին համաձայն՝ պետական լեզուն գրական հայերենն է, բոլորը յարգելու պարտաւոր են եւ առաջինը երկրի ղեկավարը:

**There are no comments yet.**